



# ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՑԻ



### ԳԱՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

26 Մարտ 2023

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (66.1-24)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ.-  
«Երկիրքը իմ աթոռս է եւ երկիրը՝  
ոտքերուս պատուանդանը: Ինչպիսի՞ տուն պի-  
տի շինէք ինծի համար, կամ ո՞ւր պիտի ըլլայ  
իմ հանգստավայրս. որովհետեւ երկիրքն ու  
երկիրը ե՛ս ստեղծեք եմ եւ իմս են,- կ'ըսէ Տէրը:  
Սակայն ես պիտի բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է  
եւ քաղցր, եւ երկիւղածութեամբ կը հնազանդի  
իմ խօսքերուս:

Գալով անօրէն մարդուն, անոր՝ ինծի եզ  
զոհելը մարդասպանութեան համազօր է, ոչխար  
զոհելը՝ շուն մորթելու, նաչի՛հ մատուցանելը՝  
խոզի արիւն ընծայելու, եւ իմ անունիս կնդրուկ  
ծխելը՝ ինծի հայհոյելու, որովհետեւ իրենք իրենց  
ցանկութիւնները կատարեցին եւ հոգիով իրենց  
գարշելի կուռքերուն փարեցան: Ուստի ես ալ  
հրապարակաւ պիտի խայտառակեմ զիրենք եւ  
իրենց մեղքերուն փոխարէնը պիտի հատուցանեմ  
իրենց. որովհետեւ կանչեցի զիրենք եւ չլսեցին  
զիս, խօսեցայ եւ մտիկ չըրին, եւ ըրին այն ինչ որ  
չար է իմ աչքիս, ընտրեցին այն ինչ որ կամքիս  
հակառակ էր»: Լսեցէ՛ք Տիրոջ պատգամը, ո՛վ  
աստուածավախներ. ձեզ ատող եւ ձեզ գզուելի  
համարողներուն ըսէք, ո՛վ եղբայրներ, թէ Տիրոջ  
անունը պիտի փառաւորուի եւ այդ փառքը ձեր  
ուրախութեան մէջ պիտի արտացոլայ, իսկ իրենք  
ամօթով պիտի մնան: Ահա քաղաքէն աղաղակ  
մը կը լսուի, ձայն մը՝ որ տաճարէն կու գայ:  
Տիրոջ ձայնն է, որ իրեն հակառակորդներուն հա-  
տուցանելիք պատիժը կը վճռէ: Կարելի՞ բան է  
որ կին մը հազիւ յղացած՝ ծնի, որ երկունքի ցաւ  
չքաշէ եւ առանց երկունքի արու գաւակ մը ծնի:  
Միթէ լսուած կամ տեսնուած բան է որ երկիրը  
մէկ օրուան մէջ յղանայ եւ մէկ անգամէն ամբողջ  
ազգ մը ծնի: Բայց ահա Սիոնը այդպէ՛ս յղացաւ եւ  
ծնաւ իր գաւակները: «Ե՛ս այդ յոյսը տուի քեզի,

եւ դուն զիս մոռցար,- կ'ըսէ Տէրը,- մոռցար որ ե՛ս  
է որ կը ստեղծեմ ամուլը եւ ծնանողը», - կ'ըսէ քու  
Աստուածը: Ուրախացի՛ր, Երուսաղէ՛մ, եւ դուք՝  
Երուսաղէ՛մը սիրողներ, այնտեղ տօն կատարելու  
հաւաքուեցէք. անոր հետ միասին ուրախացէք  
եւ ցնծացէք դուք՝ որ անոր համար նստած սուգ  
կ'ընէիք, քանի կատարեալ մխիթարութիւն պիտի  
գտնէք անոր մայրական գիրկին մէջ, եւ կուշտ  
ու կուռ պիտի վայելէք անոր գալիք փառքը:  
Որովհետեւ Տէրը այսպէս կ'ըսէ.- «Ահա ասիկ ես  
խաղաղութեամբ պիտի ողողեմ զիրենք, գետի մը  
պէս, ազգերու փառքով պիտի ծածկեմ, յորդահոս  
հեղեղի մը պէս: Անոնց գաւակները ուսերու  
վրայ պիտի բերուին եւ ծունկերու վրայ պիտի  
գզուուին: Ինչպէս մայր մը կը գզուէ իր մանուկը,  
այնպէս պիտի գզուեմ ձեզ եւ մխիթարութիւն  
պիտի գտնէք»: Այո՛, պիտի տեսնէք այս բաները  
եւ ձեր սիրտերը խնդութեամբ պիտի լեցուին,  
ձեր մարմինները դալար խոտի պէս պիտի թար-  
մանան: Տիրոջ ձեռքը պահապան պիտի ըլլայ  
իւր երկիւղածներուն վրայ, իսկ անհաւատներու  
գլխուն որպէս սպառնալիք պիտի կախուի,  
որովհետեւ ահա Տէրը կու գայ կրակի պէս եւ անոր  
կառքերը՝ մրրիկի պէս, իր բարկութեամբ հա-  
տուցանելու եւ բոցավառ կրակով բնաջնջելու:  
Այո՛, Տէրը կրակով պիտի դատէ բոլոր մարդիկը,  
եւ շատ պիտի ըլլան Տիրոջ սուրով ինկողները:  
«Անոնք որ մաքրութեան յատուկ ծէսերէ  
կ'անցնին՝ պարտէզներու մէջ կուռքեր պաշտելու  
համար, եւ սրահներու մէջ քաշուած՝ խոզի  
միս, գարշելի կենդանիներ եւ մուկ կ'ուտեն,  
միասին պիտի բնաջնջուին,- կ'ըսէ Տէրը,-  
որովհետեւ ես գիտեմ իրենց ծածուկ գործերն ու  
խորհուրդները: Ահա ես կու գամ բոլոր ազգերն ու  
ժողովուրդները հաւաքելու: Անոնք պիտի գան եւ  
իմ փառքս տեսնեն: Անոնցմէ ինծի հաւատարիմ  
մնացողներուն վրայ նշան պիտի դնեմ, եւ այդ  
փրկուածները պիտի զրկեմ բոլոր ազգերուն,  
դէպի Սպանիա, Լիպիա, Լիդիա, Փոիւգիա,  
Կիլիկիա եւ Յունաստան, եւ մինչեւ հեռաւոր

կղզիներ որոնք իմ անունս չեն լսած եւ փառքս չեն տեսած: Անոնք այս ազգերուն պիտի պատմեն իմ փառքս եւ անունս, եւ բոլոր ազգերուն մէջէն ձեր եղբայրները գտնելով՝ գանոնք ինծի պիտի բերեն որպէս նուէր: Պիտի բերեն ձերերով ու կառքերով, եւ ձիաքարչ ծածկաւոր գահաւորակներով, այնպէս՝ ինչպէս Իսրայէլի որդիները սաղմոսելով իմ տաճարս կու գային իրենց զոհերը ինծի բերելով. եւ ես անոնց մէջէն ինծի համար քահանաներ ու ղեկաւորներ պիտի ընտրեմ,- կ'ըսէ Տէրը: Եւ ինչպէս նոր երկինքն ու նոր երկիրը զոր ահա ես կը ստեղծեմ ինձմով պիտի գոյատեւեն, այնպէս ալ ձեր սերունդն ու ձեր անունը ինձմով պիտի գոյատեւեն,- կ'ըսէ Տէր Աստուած,- եւ իրենց դէմ մեղանշած մարդոց դիակները, որոնց վրայէն որդերը պիտի չպակսին, եւ որոնք անդադար պիտի այրին, բոլոր մարդոց օրինակ ըլլալու համար»:

### ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐՈՒՆ  
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ  
(2.16-3.17)

**Կ**արեւորութիւն մի՛ տաք անոնց որոնք ձեզ կը քննադատեն թէ ինչո՛ւ չէք պահեր ուստիլու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ Շաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն էին, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:

Զըլլայ որ ոեւէ մէկը իր խստակրօնութեամբ, հրեշտակներուն տուած կարեւորութեամբ եւ զանազան բաներու տեսիլքներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհետեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ. մինչդեռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու խաղերով Գլուխին կապուած ու միացած, անկէ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՞ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար, եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած եւ ուսուցուած պատուիրաններու, ինչպէս. «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դպչիր», եւ այլն: Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը

փճանան: Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, խստակրօնութեամբ եւ մարմինը անխնայ կերպով ճնշելով, բայց այս բաները որեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հոն է Քրիստոս, Հօր աջ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ոչ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

Հետեւաբար մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը՝ որ կռակաշտութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ գանոնք: Նախապէս դուք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք բարկութիւնը, գայրոյթը եւ չարութիւնը: Ձեր բերնէն որեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: Սուտ մի՛ խօսիք իրարու: Մոռցէք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի զԱստուած ճանչնաք: Անգամ մը որ նորոգուեցաք՝ ա՛լ չկայ հրեայ կամ հեթանոս, թլփատուած կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառայ կամ ազատ. կայ միայն Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորին մէջ:

Հետեւաբար, որպէս Աստուծոյ կողմէ ընտրուած ու սրբուած եւ իր սէրը վայելող մարդիկ՝ գթասիրտ եղէք. եղէք ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ եւ համբերատար: Իրարու հանդէպ հանդուրժող եղէք. եւ ներեցէք իրարու, երբ մէկը միւսին դէմ տրտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք: Եւ այս բոլորին վրայ՝ աւելի սէր ունեցէք, որովհետեւ սէրը ամէն ինչի ամբողջացուցիչ շաղախն է: Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ մէկ մարմնի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է:

Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ:

Թող Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի իր ամբողջ հարստութեամբ, որպէսզի կատարեալ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ զիրար խրատէք, եւ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհակալութեամբ գԱստուած օրհնէք: Եւ ինչ որ ալ ընէք, խօսքով թէ գործով, միշտ Տէր Յիսուսի անունով ըրէք, անոր միջոցաւ գոհութիւն յայտնելով Հօր Աստուծոյ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(22.34-23.39)

**Ե**րբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս սագուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնսագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապե՛տ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «“Սիրէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ”: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է, “Սիրէ ընկերդ քու անձիդ պէս”: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնները»:

Երբ փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի, խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած՝ գայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. “Տէրը իմ Տիրոջս ըսաւ.- Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան”:

«Արդ, եթէ Դաւիթ գայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուրնէ սկսեալ ոեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

«Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ընել: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց

երեւելու համար կ'ընեն: Իրենց գրապանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ “Վարդապետ”, այսինքն “ուսուցիչ” կոչուիլ: Բայց դուք ոեւէ մէկը “վարդապետ” մի կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ոեւէ մէկը “հայր” մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: “Առաջնորդ” մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ. դուք չէք մտածեր եւ թոյլ չէք տար նաեւ անոնց որ կ'ուզեն մտնել:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ այրիներուն տունները իրենց ձեռքէն կը յափշտակէք, միւս կողմէ կեղծաւորութեամբ ձեր աղօթքը կ'երկարէք. ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունիք:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ ծով ու ցամաք կը շրջիք մէկը նորահաւատ ընելու համար, իսկ երբ յաջողիք՝ գայն ձեզմէ կրկնապատիկ աւելի գեհնի արժանի կ'ընէք:

«Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ: Կ'ըսէք. “Ան որ տաճարին վրայ կ'երդնու՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ տաճարին ոսկիին վրայ կ'երդնու՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարնե՛ր, կոյրե՛ր. ո՞ր մէկը կարեւոր է, ոսկի՞ն թէ տաճարը, որ կը սրբագործէ ոսկին: Կամ կ'ըսէք. “Ան որ գոհի սեղանին վրայ երդում կ'ընէ՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու սեղանին դրուած գոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարնե՛ր, կոյրե՛ր. ո՞ր մէկը աւելի կարեւոր է. գո՞հը թէ գոհասեղանը, որ կը սրբագործէ գոհը: Հետեւաբար, ով որ կ'երդնու սեղանին վրայ, կ'երդնու թէ՛ սեղանին եւ թէ՛ հոն եղածներուն վրայ: Ով որ կ'երդնու տաճարին վրայ, կ'երդնու թէ՛ տաճարին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը բնակի: Նոյնպէս, ով որ կ'երդնու երկինքի վրայ,

կ'երդնու թէ՛ Աստուծոյ գահին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը նստի:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին եւ չամանին տասանորդը կու տաք եւ կ'անտեսէք Օրէնքին կարեւոր պարտաւորութիւնները, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը: Ասոնք պէտք է գործադրել, առանց միւսները անտեսելու: Կո՛յր առաջնորդներ, մէկ կողմէ մժղուկը կը քամէք, միւս կողմէ սակայն ուղտը կը կլլէք:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ պնակին ու գաւաթին արտաքինը կը մաքրէք, մինչ գիտէք թէ ներսիդին եղող ուտելիքն ու խմելիքը ի՛նչ յափշտակութեամբ եւ աղտեղութեամբ ձեռք բերած էք: Կո՛յր փարիսեցի, նախ գաւաթին եւ պնակին ներսը մաքրէ. այսպիսով դուրսն ալ մաքուր կ'ըլլայ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ կը նմանիք կիրով ճերմկցուած գերեզմաններու, որոնք արտաքնապէս գեղեցիկ կ'երեւին, բայց ներքնապէս լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակի պղծութեամբ: Նոյնպէս էք դուք. արտաքնապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքնապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մարգարէներու

չիրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. “Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի չըլլայինք”: Ահաւասիկ, դուք արդէն իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց՝ որոնք մարգարէները կոտորեցին: Գացէք ամբողջացուցէք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը: Օձե՛ր, իժերո՛ւ ծնունդներ, ինչպէ՞ս պիտի կարենաք փախուստ տալ դժոխքի դատապարտութենէն: Ահա, ես ձեզի մարգարէներ, իմաստուններ, օրէնքի ուսուցիչներ պիտի զրկեմ. դուք անոնցմէ ոմանք պիտի սպաննէք, ոմանք խաչէք, ուրիշներ ժողովարաններու մէջ պիտի չարչարէք եւ հալածէք քաղաքէ քաղաք: Այսպիսով բոլոր արդարներուն սպանութեան մասնակից եղած պիտի ըլլաք, սկսեալ անմեղ Աբէլի արիւնէն մինչեւ արիւնը Բաբելայի որդի Զաքարիայի, զոր սպաննեցիք տաճարին եւ զոհասեղանին մէջտեղ: Հաստատ գիտցէք, թէ այս բոլոր ոճիրներուն պատիժը պիտի կրէք դուք:

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի զրկած մարդիկը. քանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ թեւերուն տակ, բայց դուք, Երուսաղէմի՛ բնակիչներ, չուզեցիք: Ահա, “աւերակ պիտի ըլլայ ձեր տունը”: Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛լ պիտի չտեսնէք զիս մինչեւ որ ըսէք. “Օրհնեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով”»:

**Մ Ե Տ Պ Ա Հ Ք Ի**

**Արեւազալի, Խաղաղական Եւ Հանգստեան Ժամերգութիւններ Եւ Լսարան**

Արեւազալի ժամերգութիւն, Հինգշաբթի առաւօտ,  
30 Մարտ՝ ժամը 11.00-ին

Խաղաղական Եւ Հանգստեան Ժամերգութիւն,  
Յետ Երեկոյեան Ժամերգութեանց՝ Լսարանային Խորհրդածութիւններ  
Ընդհանուր Նիւթ՝  
**ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ**

Չորեքշաբթի, 29 Մարտին, ժամը 19.00

**Մեծ Պահքի Ծիսական Կեանքը՝ Ուղի Ինքնաքննութեան.**  
կը խորհրդածէ Առաջնորդ սրբազան հայրը՝  
Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոս